ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ «NEWMAG» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

2016թ. հունվարի 13-ին պարբերականի առցանց տարբերակում հրապարակված «Ո՞վ էր փախած հարսնացուն եւ ի՞նչ եղավ նրա հետ» հրապարակման վերաբերյալ

Դիտորդ մարմնի կազմը՝

Արամ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ազնեսա ԽԱՄՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Օլգա ՍԱՖԱՐՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

- սեփական նախաձեռնությամբ եւ «Newmag» ամսագրի խմբագրության համաձայնությամբ 2016 թվականի հունվարի 27-ին, քննարկելով ամսագրի առցանց տարբերակում հունվարի 13-ին հրապարակված **«Ո՞վ էր փախած հարսնացուն եւ ի՞նչ եղավ նրա հետ»** հոդվածը,

- առաջնորդվելով «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» 4-րդ՝ «Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ» բաժնի 4.1 կետով, ըստ որի՝ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են «պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական եւ ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության եւ նամակագրության նկատմամբ: Բացառապես հասարակական շահի առկայությամբ կամ պաշտպանության անհրաժեշտությամբ կարող է արդարացվել բարձրաստիճան պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին վերաբերող տեղեկությունների հրապարակումը»,

- եւ արձանագրելով, որ

ա) թեպետ նկարագրվող իրադարձությունը հանրային հետաքրքրասիրության առարկա է, սակայն տվյալ հրապարակման հերոսը հանրային դեմք չէ եւ չի ձգտում

հասարակական ուշադրության,

բ) տեքստում առկա փաստական տվյալների եւ ուղեկցող լուսանկարի հրապարակումն արդարացված չէ մասնավոր կյանքի պաշտպանության սկզբունքը հարգելու տեսակետից եւ կարող է հոդվածի հերոսին ճանաչելի դարձնել,

առաջարկում է «Newmag» ամսագրի խմբագրությանը՝

- «Ո՞վ էր փախած հարսնացուն եւ ի՞նչ եղավ նրա հետ» հոդվածից հեռացնել հերոսին ճանաչելի դարձնող բոլոր տեղեկությունները (անուն, ազգանուն, ծննդավայր, ուսման վայր, աշխատատեղեր), ինչպես նաեւ՝ լուսանկարը,

- անհրաժեշտության դեպքում ձեռնարկել այլ քայլեր՝ հրապարակման հերոսի հետ հնարավոր վեճը արտադատական կարգով լուծելու ուղղությամբ:

Ընդունվել է Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2016 թվականի հունվարի 27-ի նիստում, ԴՄ հետեւյալ կազմով՝

Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, «Անալիտիկոն» հանդեսի գլխավոր խմբագիր
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ
Արա ՂԱԶԱՐԱՆ, իրավաբան
Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երեւանի մամուլի ակումբի նախագահ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ, Media.am-ի պրոդյուսեր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 40-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է ԶԼՄ-ների ներկայացուցիչների էթիկայի Վարքականոնով, որն ընդունվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2007 թվականի մարտի 10-ի ժողովում: